

**«ՋՐԱՌ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ II

«ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԴԻՏ»

**2021թ. դեկտեմբերի 31-ին
ավարտվող տարվա վերաբերյալ**

Հունիս 2022թ.

Բովանդակություն

Ներքին աուդիտի արդյունքներ և առաջարկներ.....	3
1. Գործողությունների ծրագիր.....	4
2. Կադրային քաղաքականության ուսումնասիրություն.....	6
3. Գնումների գործընթացի համապատասխանություն.....	15
4. Ակտիվների և պարտավորությունների գույքագրման գործընթաց.....	46
5. Վառելիքի ծախսերի ուսումնասիրություն, վերլուծություն.....	47
6. Նախորդ ներքին աուդիտորի առաջարկների իրականացման ընթացք.....	55

Ներքին աուդիտի արդյունքներ և առաջարկներ

Կազմակերպությունում ներքին աուդիտի իրականացման արդյունքով.

- ✓ Կազմակերպության 2021թ. Ֆինանսական հաշվետվությունը ներկայացված է Հաշվետվություն I-ում,
- ✓ Բացահայտված թերությունների և անհամապատասխանությունների շտկման և բարելավմանն ուղղված հիմնական առաջարկները ամփոփված են կից «Գործողությունների ծրագրում» (Բաժին 1),
- ✓ Կադրային քաղաքականության ուսումնասիրություն, (Բաժին 2),
- ✓ Գնումների գործընթացի համապատասխանությունը ներկայացված է Բաժին 3-ում,
- ✓ Ակտիվների ու պարտավորությունների գույքագրման գործընթացը ներկայացված է Բաժին 4-ում,
- ✓ Վառելիքի գծով ծախսերի ուսումնասիրություն, վերլուծություն, ներկայացված է Բաժին 5-ում,
- ✓ Նախորդ ներքին աուդիտորի առաջարկների իրականացման ընթացք ներկայացված է Բաժին 6-ում:

Հրաչիկ Դավթյան

Հանրային հատված ներքին աուդիտոր

«Բի Դի Օ Արմենիա» ՓԲԸ

10.06.2022թ.

Գնել Խաչատրյան

Աուդիտի ղեկավար

1. Գործողությունների ծրագիր

Առաջարկության համար	Առաջարկություն	Կարևորություն աստիճանը*	Հղում հաշվետվությունը	Աուդիտի ենթարկված միավորի ղեկավարի պատասխանը	Գործողության իրականացման համար պատասխանատու անձ	Կատարման վերջնաժամկետ
1.	Առաջարկվում է կազմել չմուտքագրված Հիմնական միջոցների համար կազմել հանձնման-ընդունման ակտ, շահագործող անձանց հետ կազմել Շահագործման հանձնման ակտեր, մուտքագրել որպես հիմնական միջոց, հաշվարկել մաշվածություն:	Հիմնական	Ֆին. հաշվ. 6.1			
2.	Առաջարկվում է հիմնական միջոցների մաշվածության գծով հետաձգված ծախսերի գծով ճանաչված ակտիվը հետընթաց ճանապարհով ճշգրտել նախորդ տարիների ֆինանսական արդյունքները, ապաճանաչել սույն հոդվածով կուտակված՝ 8,131,571 հազար դրամ ակտիվ ճանաճված հետաձգված ծախսերը:	Հիմնական	Ֆին. հաշվ. 6.2			
3.	Առաջարկվում է կատարել դեբիտորական պարտքերի վճարման ժամկետայնության վերլուծություն, անհուսալի դեբիտորական պարտքերի գծով ձևավորել պահուստաֆոն:	Հիմնական	Ֆին. հաշվ. 6.4			
4.	Առաջարկվում է վերանայել Վարչական ծախսերում ծախսի բնույթը, մասնավորապես «Սևանա լճի ջրառի բնօգտագործման վճարը» հոդվածը: Հետագայում սույն հոդվածով ծախսը ներառել ջրամատակարարման ծառայությունների մատուցման ինքնարժեքում:	Միջին	Ֆին. հաշվ. 6.12			

5.	Առաջարկվում է վերացնել, հետագայում առաջնորդվել Կադրային քաղաքականության (Բաժին 2) կատարված 1-8 ուսումնասիրությունների առաջարկությունները:	Միջին	Համապ. աուդիտ Բաժին 2			
6.	Առաջարկվում է վերացնել, հետագայում առաջնորդվել Գնումների գործընթաց (Բաժին 3) կատարված ուսումնասիրությունների առաջարկությունները:	Միջին	Համապ. աուդիտ Բաժին 3			
7.	2000 թվականի հունիսի 02-ի ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի N 102 «Կազմակերպություններում ակտիվների և պարտավորությունների պարտադիր գույքագրման կարգը հաստատելու մասին» հրամանի պահանջներով կատարել ակտիվների և պարտավորությունների գույքագրում:	Հիմնական	Համապ. աուդիտ Բաժին 4			
8.	Առաջարկվում է հետագայում առաջնորդվել «Վառելիքի ծախսի ուսումնասիրություն, վերլուծություն» բաժնով կատարված դիտարկումներով:	Միջին	Համապ. աուդիտ Բաժին 5			

* Առաջարկությունների կարևորության աստիճանը դասակարգված է հետևյալ չափանիշներով.

- 1) **Հիմնական**, վերաբերում է հսկողության համակարգի հույժ կարևոր թերություններին, որոնք պահանջում են հրապապ ուշադրություն:
- 2) **Միջին**. վերաբերում է հսկողության համակարգի կարևոր թերություններին: Թեև այս խմբում դասակարգված առաջարկությունները նույնպես կարող են պահանջել հրապապ լուծում:
- 3) **Փոքր**. վերաբերում է հսկողության համակարգի ավելի քիչ կարևոր թերություններին: Փոփոխությունները պետք է իրականացվեն գործունեության ընթացքում, սակայն չպետք է դիտարկվեն որպես առաջնային լուծում պահաջող հարցեր:

**Կազմակերպության տնօրեն
Արտաշես Աբգարյան**

**Գլխավոր հաշվապահ
Արփինե Սողոյան**

2. Կադրային քաղաքականության ուսումնասիրություն

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 1

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱԴՐԱՅԻՆ ՀԱՇՎԱՊԱՀՈՒԹՅԱՆ

ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՆ ԵՎ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքային օրենսդրության, կադրային հաշվապահության իրավակիրառ պրակտիկայի և փաստաթղթաշրջանառության դրվածքի ուսումնասիրությունը կատարվել է ընտրանքային եղանակով:

Ուսումնասիրվել են՝

1.«Զրառ» ՓԲԸ-ի ներքին կարգապահական կանոնները.

2. աշխատողների կողմից ներկայացված փաստաթղթերի հիման վրա կազմված անձնական գործերի ամբողջականությունը և լիարժեքությունը.

3. աշխատանքային, քաղաքացիաիրավական և սեզոնային պայմանագրերով կարգավորվող իրավահարաբերությունները.

4. ամենամյա արձակուրդների տրամադրման և հետ կանչման, չվճարվող, նպատակային արձակուրդների տրամադրման աշխատանքների իրավական և փաստաթղթային ձևակերպումները.

5. աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերը.

6. իրավական ակտերի հաշվառման կառուցակարգերը.

7. կադրերին վերաբերող հարկային, նպատակային սոցվճարների և դրոշմանիշային վճարների օրենսդրության կատարման իրավաչափությունը.

Իրականացված ուսումնասիրությամբ բացահայտվել են թերություններ, բացթողումներ և սխալներ, որոնք համեմատվել են ՀՀ օրենսդրության պահանջների հետ, գնահատվել են կատարված աշխատանքի ռիսկայնությունը և առաջարկությունների ձևով տրվել են դրանք վերացնելու իրավական, փաստաթղթային ձևակերպումները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 2

«ԶՐԱՌ» ՓԲԸ -Ի ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄԲՈՂՋԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԻԱՐԺԵՔՈՒԹՅԱՆ

Աշխատողների անձնական գործերը վարվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 16-րդ գլխի պահանջներին համապատասխան և պահպանվում են գրասենյակային պահարաններում՝ կիրառելով «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված աշխատողների անձնական տվյալների պաշտպանության, պահպանության և օգտագործման կարգը:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 3

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ «Զրառ» ՓԲԸ-ում աշխատանքի ընդունումն իրականացվում է և՛ աշխատանքի ընդունման հրամանով, և՛ աշխատանքային պայմանագրով, որով խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, ըստ որի, մեջբերում են «Աշխատողի և գործատուի միջև աշխատանքային հարաբերությունները ծագում են աշխատանքային օրենսդրությամբ սահմանված կարգով կնքված գրավոր աշխատանքային պայմանագրով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով»: Չնայած հրամանները կազմված են «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, սակայն նրանցում առկա են թերություններ և բացթողումներ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 84-րդ հոդվածի նկատմամբ:

Աշխատանքի ընդունման հրամանում՝

• Բացակայում են հրամանների բնույթը բացահայտող տառերը՝ "Ա" (անհատական), "Լ" (լրկալ): **Չի իրացվել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի պահանջը:**

• Անհատական հրամանների վրա բացակայում են աշխատողների ստորագրությունները: **Չեն իրացվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի պահանջները:**

• Կազմակերպությունում առկա չէ տնօրենի կողմից ընդունված իրավական ակտերի հաշվառման գրանցամատյանը (ՀՀ կառավարության 2005թ.-ի հոկտեմբերի 20-ի թիվ 1882-Ն որոշման պահանջ),

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են որոշակի դեպքեր, որոնք չեն համապատասխանում ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին, մասնավորապես՝

• Պաշտոնների անվանացանկում կան վնասակար աշխատանք կատարող աշխատակիցներ և (կամ) արտաժամյա և (կամ) գիշերային աշխատանքների և (կամ) հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքներ, որոնք որպես լրացուցիչ աշխատավարձ վճարվել են լրավճարի տեսքով:

Խախտվել է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, որի ձևակերպումը հետևյալն է՝ «Հավելումը սույն օրենսգրքով, օրենքով, այլ նորմատիվ իրավական ակտերով, կոլեկտիվ կամ աշխատանքային պայմանագրերով, գործատուի իրավական ակտով սահմանված դեպքերում և չափերով հիմնական աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող լրացուցիչ վարձատրությունն է, որը վճարվում է ծանր, վնասակար կամ առանձնապես ծանր,

առանձնապես վնասակար աշխատանք կատարելու և (կամ) արտաժամյա և (կամ) գիշերային աշխատանքների և (կամ) հանգստյան և օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական և հիշատակի օրերին կատարված աշխատանքների համար:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

2. Առաջնորդվելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 14-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝ նոր ընդունվող քաղաքացու հետ անհրաժեշտ է կնքել կա՛մ աշխատանքային պայմանագիր կա՛մ աշխատանքի ընդունելու և աշխատանքային պարտականությունների կատարման անցնելու թույլտվության մասին հրաման:

3. Գործատուի ներքին և անհատական իրավական ակտերը հաշվառել ՀՀ կառավարության 2005թ. հոկտեմբերի 20-ի N1882-Ն որոշմամբ հաստատված կարգով:

4. Աշխատանքից ազատված աշխատողի անձնական գործերը արխիվացնել, աշխատանքից ազատման մասին տվյալները երեք օրվա ընթացքում ներկայացնել ՊԵԿ, իսկ 7 օրվա ընթացքում՝ աշխատանքից ազատված արական սեռի աշխատողի բնակության վայրը սպասարկող զինկոմիսարիատ (<իմք՝ «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդված, ՀՀ կառավարության 2018թ. նոյեմբերի 8-ի «Զինվորական հաշվառման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2010թ. մայիսի 27-ի N657-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N1269-Ն և 2019թ. ապրիլի 4-ի «Պահպանության ժամկետների նշումով արխիվային փաստաթղթերի օրինակելի ցանկը սահմանելու և ՀՀ կառավարության 2006թ. մարտի 9-ի N 351-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 397-Ն որոշումներ):

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքային օրենսդրության և աշխատանքային իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջները խախտելը առաջացնում է ՀՀ Վարչական իրավախախտումների մասին օրենսգրքի 41-րդ հոդվածով սահմանված պատասխանատվություն:

ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 4

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ

Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ «Զրառ» ՓԲԸ-ում 2021թ.-ին կատարվել են աշխատանքներ՝ քաղիրավական պայմանագրերով:

Սակայն որևէ քաղիրավական պայմանագրի մասով չի ներկայացվել գրանցման հայտ, ինչպես նաև չեն հաշվարկվել և վճարվել սոցիալական և դրոշմանիշային

վճարներ: Կարող ենք արձանագրել, որ ծախսագրման հիմք առկա չի եղել, և հետևաբար, չէր կարող կատարվել շահութահարկի նվազեցում: Հանձնման-ընդունման ակտեր կազմվել են միայն 2 և ավել ամիս տևողությամբ քաղիրավական պայմանագրերի դեպքերում:

- Խախտվել են եկամտային հարկի եվ սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի <ա> ենթակետի, 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի , ՀՀ հարկային օրենսգրքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ ենթակետի, 127-րդ հոդվածի և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի գլուխ 39-ի պահանջները:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջնորդվել ՀՀ հարկային և ՀՀ քաղաքացիական օրենսգրքերի պահանջներով: Ծառայությունների պատշաճ կատարումը և ստացումը հաստատել հանձնման-ընդունման ակտով, որը և հիմք կհանդիսանա վճարում իրականացնելու համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 5

ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ՉԿՃԱՐԿՈՂ, ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ և ՓԱՍՏԱԹՂԱՅԻՆ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԻ

Ուսումնասիրության ընթացքում արձանագրվել են որոշակի դեպքեր, որոնք չեն համապատասխանում ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին, մասնավորապես՝

Դեպք 1. Կազմակերպությունում մշակված չէ ամենամյա արձակուրդի տրամադրման ժամանակացույցը: **Չեն իրացվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի և ՀՀ ԱՕ 5-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները:**

Ըստ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ հոդվածի 1-ին մասի յուրաքանչյուր աշխատանքային տարվա համար ամենամյա արձակուրդը տրամադրվում է տվյալ աշխատանքային տարում: Իսկ ՀՀ ԱՕ 167-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղափոխված ամենամյա արձակուրդը, որպես կանոն, տրամադրվում է նույն աշխատանքային տարում, բայց ոչ ուշ, քան 18 ամսվա ընթացքում՝ սկսած այն աշխատանքային տարվա վերջից, որի համար աշխատողին չի հատկացվել կամ մասնակի է հատկացվել ամենամյա արձակուրդը: Աշխատողի միջնորդությամբ կամ համաձայնությամբ ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը կարող է տեղափոխվել և միացվել հաջորդ տարվա ամենամյա արձակուրդին:

Չնայած այն հանգամանքին, որ մոտ 30 աշխատակիցներ ունեն չօգտագործված ամենամյա արձակուրդային օրերի կուտակումներ 2013թ.-ից սկսած (օրինակ 1՝ Հովհաննես Առաքելյան՝ 01.06.13թ.-01.06.14թ.՝ 10 օր, 01.06.14թ.-01.06.16թ.՝ 40 օր, 01.06.17թ.- 01.06.18թ.՝ 20 օր; Մկրտիչ Առաքելյան՝ 10.11.16թ-10.11.18թ.՝ 40 օր,

10.11.19թ.-10.11.21թ.' 40 օր), «Զրառ» ՓԲԸ-ն չունի չօգտագործված ամենամյա արձակուրդային օրերի մասով առանձնացված պահուստային ֆոնդ:

Նշենք նաև, որ առկա են ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարման ուշացումներ: (Օրինակ 1՝ Զրաչափության և SCADA համակարգերի սպասարկման բաժնի պետ Լևոն Արթուրի Վարդանյանին տրամադրվել է ամենամյա արձակուրդ 2021թ. սեպտեմբերի 17-ից մինչև 2021թ. հոկտեմբեր 01-ը ներառյալ, սակայն արձակուրդային վճարումը հաշվարկվել և վճարվել է 2021թ. սեպտեմբերի 22-ին, ամենամյա արձակուրդ գնալուց 6 օր հետո: Օրինակ 2՝ Մամիկոն Գևորգի Գևորգյանին 2021թ.-ի ընթացքում երկու անգամ տրամադրվել է ամենամյա արձակուրդ մարտ և նոյեմբեր ամիսներին: Մարտ ամսին ամենամյա արձակուրդ տրամադրվել է 2021թ. մարտ 1-ից մինչև 2021թ. մարտ 29 ներառյալ, սակայն արձակուրդային վճարը կատարվել է 2021թ. մարտի 3-ին: Հաջորդ արձակուրդը տրամադրվել է 2021թ. նոյեմբերի 1-ից մինչև 2021թ. նոյեմբեր 26 ներառյալ, վճարումն իրականացվել է 2021թ. նոյեմբերի 2-ին): Ամենամյա արձակուրդի համար վերոնշյալ երկու դեպքերում էլ աշխատավարձի վճարումն իրականացվել է ուշացմամբ, այն պարագայում, երբ ամենամյա արձակուրդի համար աշխատավարձի վճարումն պետք է իրականացվի ոչ ուշ, քան ամենամյա արձակուրդն սկսելուց երեք օր առաջ: Ըստ էության, եթե աշխատողի համար հաշվարկված աշխատավարձը սահմանված ժամկետում չի վճարվում աշխատողից անկախ պատճառներով, ապա ամենամյա արձակուրդը պետք է երկարաձգվել այնքան օրով, որքան օրով երկարաձգվել է աշխատավարձի վճարումը, և երկարաձգված ժամանակի համար վճարումը պետք է կատարել այնպես, ինչպես ամենամյա արձակուրդի համար:

Ուսումնասիրության ընթացքում չի հանդիպել գեթ մեկ դեպք, երբ ուշացումով վճարված արձակուրդի համար հրամանով, ժամկետանց յուրաքանչյուր օրվա հաշվարկով, աշխատողի ամենամյա արձակուրդի տևողությունը երկարաձգվի և վճարվի:

-Խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 164-րդ, 167-րդ և 169-րդ հոդվածների պահանջները, որոնց չկատարումը կամ սխալ կատարումը առաջացնում է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 41-րդ հոդվածով սահմանված չափով պատասխանատվություն:

Դեպք 2. Կազմակերպության աշխատակիցներին չվճարվող արձակուրդ տրամադրելու դեպքում գրանցման հայտ չի ներկայացվում (օրինակ՝ Անդրանիկ Ասլիկյանը 2021թ. սեպտեմբերի 30-ից մինչև 2021թ. հոկտեմբեր 19 հրամանով գտնվել է չվճարվող արձակուրդում, սակայն գրանցման հայտ ներկայացված չէ):

-Խախտվել են «Եկամտային հարկի եվ սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ենթակետի և 10-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի պահանջները:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ամենամյա, նպատակային արձակուրդների տրամադրման աշխատանքների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում կատարված աշխատանքը առաջ է բերել ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 41-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության հատկանիշներ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է՝

- ✓ սահմանել ամենամյա արձակուրդ տրամադրելու ժամանակացույց: Ամենամյա արձակուրդը կարող է տրամադրվել սահմանված արձակուրդի հերթականությունից (ժամանակացույցից) տարբերվող ժամանակ միայն տնօրենի և աշխատողի փոխադարձ համաձայնությամբ.
- ✓ չվճարվող արձակուրդները պետք է տրամադրել աշխատողի դիմումի հիման վրա, կողմերի համաձայնությամբ՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դեպքերում: Չվճարվող արձակուրդի տրամադրման վերաբերյալ գործատուի կողմից ընդունվող անհատական իրավական ակտը պատշաճ կարգով ծանոթացնելով աշխատողին և «Եկամտային հարկի եվ սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի համաձայն հարկային մարմին հայտ ներկայացնել չվճարվող արձակուրդ տրամադրելու մասին .
- ✓ ամենամյա արձակուրդի համար հաշվարկված աշխատավարձը ժամկետանց վճարելու դեպքում ամենամյա արձակուրդը երկարաձգել այնքան օրով, որքան օրով երկարաձգվել է աշխատավարձի վճարումը, և երկարաձգված ժամանակի համար վճարումը կատարել ամենամյա արձակուրդի համար սահմանված կարգով:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 6

ԱՇԽԱՏԱԺԱՄԱՆԱԿԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՏԵՂԵԿԱԳՐԵՐԻ

Ընտրանքային կարգով ուսումնասիրվել են «Զրառ» ՓԲԸ-ի մարտ, մայիս և սեպտեմբեր ամիսների աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրերը, արդյունքում արձանագրվել են հետևյալ դեպքերը.

Դեպք 1. Հերթափոխային գրաֆիկով աշխատող պահակ Հայկ Հովհաննիսյանը մարտ ամսվա ընթացքում փոխարինելով արձակուրդի մեջ գտնվող պահակ Գրիգոր Կոլոտյանին՝ աշխատել է 312 ժամ: Այսպիսի արտադրական վարքագիծը, ըստ էության, առաջ է բերում աշխատուժի շահագործում, ինչն իր հերթին առաջացնում է ՀՀ աշխատանքային օրենսգրքի 102-րդ հոդվածին բնորոշ հատկանիշներ, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածով նախատեսվող պատասխանատվություն: Ընդ որում Հայկ Հովհաննիսյանի համար հաշվապահությունը հաշվարկել և վճարել է միայն աշխատավարձ:

Չի վարձատրվել արտաժամյա կատարված աշխատանքի, ինչպես նաև մարտի 8-ի ոչ աշխատանքային՝ տոնական օրվա ընթացքում կատարած աշխատանքի համար:

- Խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 4-րդ մասի, 178-րդ, 185-րդ, 198-րդ հոդվածների պահանջները, որոնց չկատարումը կամ սխալ կատարումը առաջացնում է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 41-րդ, 169⁸-րդ հոդվածներով սահմանված չափով պատասխանատվություն և խախտվել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածի պահանջը:

Դեպք 2. Արտադրական բազայի խառատ Անդրանիկ Ասիկյանը ժամանակացույցով օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական օրվա ընթացքում կատարած աշխատանքի համար չի վարձատրվել կրկնակիի չափով:

- Խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ, 185-րդ, 198-րդ հոդվածների պահանջները, որոնց չկատարումը կամ սխալ կատարումը առաջացնում է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 41-րդ և 169⁸ -րդ հոդվածներով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված չափով պատասխանատվություն:

Դեպք 3. Պահակ Մամիկոն Գևորգյանը աշխատանքի ժամանակացույցով օրենքով սահմանված ոչ աշխատանքային՝ տոնական օրվա ընթացքում (2021թ. սեպտեմբեր 21) կատարած աշխատանքի համար չի վարձատրվել կրկնակիի չափով: Հարկ է նշել, որ տվյալ աշխատակցի աշխատաժամանակի տևողությունը սեպտեմբեր ամսին կազմել է 264 ժամ, մինչդեռ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, մեջբերում եմ, «Առանձին կատեգորիայի աշխատողների (անընդմեջ հերթապահության ռեժիմով աշխատող առողջապահական կազմակերպություններ, հոգաբարձության (խնամակալության) կազմակերպություններ, մանկական դաստիարակչական կազմակերպություններ, էներգամատակարարման, գազամատակարարման, ջերմամատակարարման մասնագիտացված կազմակերպություններ, կապի և վթարների հետևանքների վերացման մասնագիտացված ծառայություններ և այլն) աշխատաժամանակի տևողությունը կարող է կազմել օրական 24 ժամ: Այդ աշխատողների աշխատաժամանակի միջին տևողությունը շաբաթվա ընթացքում չի կարող անցնել 48 ժամից, իսկ աշխատանքային օրերի միջև հանգստի ժամանակը չի կարող պակաս լինել 24 ժամից»: Հետևաբար պետք է հաշվարկվեր և վճարվեր աշխատավարձ կատարված արտաժամյա աշխատանքի համար:

- Խախտվել են ՀՀ աշխատանքային օրենսգրքի 139-րդ, 178-րդ, 185-րդ, 198-րդ հոդվածների պահանջները, որոնց չկատարումը կամ սխալ կատարումը առաջացնում է ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 41-րդ և 169⁸ -րդ հոդվածներով և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով սահմանված չափով պատասխանատվություն:

Դեպք 4. Հերթափոխային ռեժիմով աշխատող հերթապահ հսկիչ կարգավորող Սուրիկ Վարդևանյանը սեպտեմբեր ամսին գտնվել է ժամանակավոր անաշխատունակության մեջ: Ժամանակավոր անաշխատունակության հաշվարկը հերթափոխային օրերի փոխարեն կատարվել է աշխատանքային օրերով:

- **Խախտվել են ՀՀ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի և 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:**

Դեպք 5. Ջրառ ՓԲԸ-ում ժամանակավոր անաշխատունակության բոլոր դեպքերը հաշվարկվել և վճարվել են անաշխատունակության երկրորդ օրվանից սկսած, մինչդեռ 20.06.2021թ.-ի ՀՕ-242-Ն օրենքի համաձայն ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում և վճարվում է բոլոր օրերի համար:

- **Խախտվել է «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» 2010 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-160-Ն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջը:**

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Ոսումնասիրությունը ցույց է տալիս, որ առանձին դեպքերում կատարված աշխատանքը առաջ է բերել պատասխանատվության հատկանիշներ: Աշխատաժամանակի հաշվառման տեղեկագրի վարման աշխատանքները կատարվել են ՀՀ ֆինանսների նախարարի 2016թ. փետրվարի 1-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման գրանցամատյանների օրինակելի ձևերը սահմանելու մասին» N°37-Ն հրամանի 1-ին հավելվածով հաստատված ԾԽ-5-ի Ձևի և ՀՀ աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի և ՀՀ ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի և 8-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների խախտումներով:

Նշված հոդվածների չկիրառումը կամ ոչ ճիշտ կիրառումն առաջացնում է պատասխանատվություն՝ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 41-րդ, 169⁸-րդ և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածներով սահմանված չափով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է՝

- ✓ աշխատաժամանակի հաշվառման տեղեկագիրը վարել ՀՀ ֆինանսների նախարարի 2016թ. փետրվարի 1-ի «Հանրային հատվածի կազմակերպությունների սկզբնական հաշվապահական հաշվառման փաստաթղթերի և հաշվապահական հաշվառման գրանցամատյանների

օրինակելի ձևերը սահմանելու մասին №37-Ն հրամանի 1-ին հավելվածով հաստատված ԾԽ-5-ի Ձևի պահանջներին համապատասխան:

- ✓ աշխատավարձի հետ միասին հաշվարկել և վճարել արտաժամյա և տոնական օրերին կատարված աշխատանքի համար օրենքով սահմանված չափով և կարգով:
- ✓ Ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկել՝ առաջնորդվելով «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներին համապատասխան:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ 7

ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԱԶԱՏՄԱՆ ԴԵՊՔԵՐԻ

Ընտրանքային կարգով ուսումնասիրվել են «Զրառ» ՓԲԸ-ի աշխատանքից ազատված անձանց վերաբերյալ իրականացված կադրային գործավարությունը:

Ուսումնասիրության ընթացքում պարզվել է, որ 2021թ.-ի հոկտեմբերի 31-ով լուծվել են թվով 14 աշխատակիցների հետ կնքված սեզոնային աշխատանքային պայմանագրերը, սակայն հարկային մարմին ազատման հայտերը ուղարկվել են նոյեմբերի 8-ին:

- Խախտվել է <Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին> ՀՀ օրենքի պահանջը:

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ

Նշված օրենքի չկիրառումը կամ ոչ ճիշտ կիրառումն առաջացնում է պատասխանատվություն՝ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 169¹-րդ հոդվածով սահմանված չափով:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է՝

- ✓ առաջնորդվել «Եկամտային հարկի և սոցիալական վճարի» և «Անձնավորված հաշվառման մասին» ՀՀ օրենքի պահանջներով:

3. Գնումների գործընթացի համապատասխանություն

«Զրառ» ՓԲԸ-ի 2021 թվականին կազմակերպված գնումների ընթացակարգերի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է մի շարք թերություններ և խախտումներ, որը ներկայացված է աղյուսակ 1-ում, ինչպես նաև գնումների պլանում արձանագրվել են, որ մի շարք ԳՄԱ(CPV) կոդերը չի համապատասխանում PPCM համակարգում մուտաքգրված ԳՄԱ(CPV) կոդերի հերթական համարներին, ինչով պայմանավորված խախտվել է ՀՀ Կառավարության 13.04.2017թվականի 390-Ն որոշման Հավելված 3-ի 2-րդ կետի դրույթները:

Ընթացակարգի ծածկագիր	Համակարգողի կողմից գնման հայտի վերաբերյալ եզրակացություն	Տեղեկագրում հրապարակված լինելու փաստերի վերաբերյալ	Եզրակացություն ընթացակարգի վերաբերյալ
ՀՀՏԿԵՆԶԿ-Զ-ԳՀԾԶԲ-21/4	Առկա չէ	<p>Ընթացակարգի հայտերի վերջնաժամկետ՝ 02.02.2021թ, ժամը 17:30:</p> <p>Բացման և գնահատման նիստը կայացել է 02.02.2021թ., իսկ նիստի արձանագրությունը հրապարակվել է 08.02.2021թ.-ին:</p> <p>Շահերի բախման բացակայության մասին հայտարարության տեքստը հաստատվել է 02.02.2021թ., իսկ հրապարակվել է 08.02.2021թ.:</p> <p>Բանակցությունների նիստի վարման արձանագրությունը կայացել է 05.02.2021թ., իսկ</p>	<p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 8-րդ կետի 2-րդ պարբերությունը, այն է՝ Գնումները համակարգողը եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասը, այն է՝ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը պետք է հրապարակվեր տեղեկագրում հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը:</p>

		<p>հրապարակվել է 08.02.2021թ.: Պայմանագիր կնքելու որոշումը կայացվել է 05.02.2021թ., իսկ հրապարակվել է 08.02.2021թ.: Կնքված պայամանգրի մեջ կատարվել փոփոխություններ 18.03.2021թ, իսկ հրապարակվել է 15.06.2021թ.:</p>	<p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում: Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 32-րդ կետի թ) պարբերությունը, այն է՝ եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, որը բացակայում է: Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 55-րդ կետը, այն է՝ պայմանագրում կատարված փոփոխությունը և դրա մասին հայտարարությունը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ այդ փոփոխությունը կատարելու օրվանից հաշված երեք աշխատանքյին օրվա ընթացքում:</p>
<p>ՀՀՏԿԵՆԶԿ-Զ-ԳՀԾԶԲ-21/6</p>	<p>Առկա չէ</p>	<p>Ընթացակարգի հայտերի վերջնաժամկետ՝ 03.02.2021թ, ժամը 17:30: Բացման և գնահատման նիստը կայացել է 03.02.2021թ., իսկ նիստի արձանագրությունը հրապարակվել է 08.02.2021թ.-ին: Շահերի բախման բացակայության մասին հայտարարության տեքստը հաստատվել է 03.02.2021թ., իսկ հրապարակվել է 08.02.2021թ.: Բանակցությունների նիստի վարման արձանագրությունը կայացել է 09.02.2021թ., իսկ</p>	<p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 8-րդ կետի 2-րդ պարբերությունը, այն է՝ Գնումները համակարգողը եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին: Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասը, այն է՝ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը պետք է հրապարակվեր տեղեկագրում հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը:</p>

		<p>հրապարակվել է 10.02.2021թ.: Պայմանագիր կնքելու որոշումը կայացվել է 10.02.2021թ., իսկ հրապարակվել է 10.08.2021թ.:</p>	<p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում: Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 32-րդ կետի թ) պարբերությունը, այն է՝ եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, որը բացակայում է:</p>
<p>ՀՀՏԿԵՆՁԿ-Զ- ԳՀԾՁԲ-21/9</p>	<p>Առկա չէ</p>	<p>Ընթացակարգի հայտերի վերջնաժամկետ՝ 04.02.2021թ., Բացման և գնահատման նիստը կայացել է 04.02.2021թ., իսկ նիստի արձանագրությունը հրապարակվել է 09.02.2021թ.-ին: Շահերի բախման բացակայության մասին հայտարարության տեքստը հաստատվել է 04.02.2021թ., իսկ հրապարակվել է 09.02.2021թ.: Բանակցությունների նիստի վարման արձանագրությունը կայացել է 11.02.2021թ., իսկ հրապարակվել է 15.02.2021թ.: Պայմանագիր կնքելու որոշումը կայացվել է 15.02.2021թ., իսկ հրապարակվել է 15.02.2021թ.: Կնքված պայամանգրի մեջ կատարվել փոփոխություններ 15.03.2021թ, իսկ հրապարակվել</p>	<p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 8-րդ կետի 2-րդ պարբերությունը, այն է՝ Գնումները համակարգողը եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին: Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասը, այն է՝ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը պետք է հրապարակվեր տեղեկագրում հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը: Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում: Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասը, այն է՝ հայտերի գնահատման նիստի օրվա ավարտին</p>

		<p>է 28.06.2021թ.:</p>	<p>հաջորդող առաջաջին աշխատանքային օրը հայտերի գնահատման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում: Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 32-րդ կետի թ) պարբերությունը, այն է՝ եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, որը բացակայում է: Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 55-րդ կետը, այն է՝ պայմանագրում կատարված փոփոխությունը և դրա մասին հայտարարությունը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ այդ փոփոխությունը կատարելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում:</p>
<p>ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/3</p>	<p>Առկա չէ</p>	<p>Ընթացակարգի հայտերի վերջնաժամկետ՝ 09.02.2021թ., Բացման և գնահատման նիստը կայացել է 09.02.2021թ., իսկ նիստի արձանագրությունը հրապարակվել է 11.02.2021թ.-ին: Շահերի բախման բացակայության մասին հայտարարության տեքստը հաստատվել է 09.02.2021թ., իսկ հրապարակվել է 11.02.2021թ.: Բանակցությունների նիստի վարման արձանագրությունը կայացել է 12.02.2021թ., իսկ հրապարակվել է 17.02.2021թ.: Պայմանագիր կնքելու որոշումը կայացվել է 12.02.2021թ., իսկ</p>	<p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասը, այն է՝ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը պետք է հրապարակվեր տեղեկագրում հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը: Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում: Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասը, այն է՝ հայտերի գնահատման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում: Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 32-րդ կետի թ) պարբերությունը, այն է՝ եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա իրական շահառուների վերաբերյալ</p>

		<p>հրապարակվել է 17.02.2021թ.: Կնքված պայմանագրի մեջ կատարվել փոփոխություններ 15.03.2021թ, իսկ հրապարակվել է 28.06.2021թ.:</p>	<p>տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, որը բացակայում է: Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 55-րդ կետը, այն է՝ պայմանագրում կատարված փոփոխությունը և դրա մասին հայտարարությունը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում այդ փոփոխությունը կատարելու օրվանից հաշված երեք աշխատանքյին օրվա ընթացքում:</p>
<p>ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ- ԳՀԱՇՁԲ-21/4</p>	<p>Առկա չէ</p>	<p>Ընթացակարգի հայտերի վերջնաժամկետ՝ 18.02.2021թ.,: Բացման և գնահատման նիստը կայացել է 18.02.2021թ., իսկ նիստի արձանագրությունը հրապարակվել է 01.03.2021թ.-ին: Շահերի բախման բացակայության մասին հայտարարության տեքստը հաստատվել է 18.02.2021թ., իսկ հրապարակվել է 01.03.2021թ.: Բանակցությունների նիստի վարման արձանագրությունը կայացել է 22.02.2021թ., իսկ հրապարակվել է 01.03.2021թ.: Պայմանագիր կնքելու որոշումը կայացվել է 22.02.2021թ., իսկ հրապարակվել է 25.02.2021թ.: Պայմանագիրը կնքվել է 10.03.2021թ, իսկ կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 10.03.2021թ.,</p>	<p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 8-րդ կետի 2-րդ պարբերությունը, այն է՝ Գնումները համակարգողը եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին: Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում: Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասը, այն է՝ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը պետք է հրապարակվեր տեղեկագրում հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը: Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասը, այն է՝ հայտերի գնահատման նիստի օրվա ավարտին</p>

		<p>կնքված պայմանագրի մասին ճշգրտված հայտարարությունը հրապարակվել է 16.03.2021թ:</p>	<p>հաջորդող առաջաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:</p> <p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 32-րդ կետի թ) պարբերությունը, այն է՝ եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, որը բացակայում է:</p>
<p>ՀՀՏԿԵՆԶԿ-Զ-ԳՀԾԶԲ-21/12</p>	<p>Առկա չէ</p>	<p>Ընթացակարգի հայտերի վերջնաժամկետ՝ 19.02.2021թ.,:</p> <p>Բացման և գնահատման նիստը կայացել է 19.02.2021թ., իսկ նիստի արձանագրությունը հրապարակվել է 01.03.2021թ.-ին:</p> <p>Շահերի բախման բացակայության մասին հայտարարության տեքստը հաստատվել է 19.02.2021թ., իսկ հրապարակվել է 01.03.2021թ.:</p> <p>Բանակցությունների նիստի վարման արձանագրությունը</p>	<p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 8-րդ կետի 2-րդ պարբերությունը, այն է՝ Գնումները համակարգողը եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ</p>

		<p>կայացել է 23.02.2021թ., իսկ հրապարակվել է 01.03.2021թ.:</p> <p>Պայմանագիր կնքելու որոշումը կայացվել է 23.02.2021թ., իսկ հրապարակվել է 25.02.2021թ.:</p> <p>Պայմանագիրը ծանուցվել է 02.03.2022թ և կնքվել է 04.03.2021թ, իսկ կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 05.03.2021թ.:</p> <p>Կնքված պայմանագրի մեջ կատարվել փոփոխություններ 12.03.2021թ, իսկ հրապարակվել է 28.06.2021թ.:</p>	<p>մասը, այն է՝ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը պետք է հրապարակվեր տեղեկագրում հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասը, այն է՝ հայտերի գնահատման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:</p> <p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 32-րդ կետի թ) պարբերությունը, այն է՝ եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, որը բացակայում է:</p> <p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 55-րդ կետը, այն է՝ պայմանագրում կատարված փոփոխությունը և դրա մասին հայտարարությունը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ այդ փոփոխությունը կատարելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում:</p>
ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՇՁԲ-21/5	Առկա չէ	Ընթացակարգի հայտերի վերջնաժամկետ՝ 19.02.2021թ.,:	Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 8-րդ

		<p>Բացման և գնահատման նիստը կայացել է 19.02.2021թ., իսկ նիստի արձանագրությունը հրապարակվել է 01.03.2021թ.-ին:</p> <p>Շահերի բախման բացակայության մասին հայտարարության տեքստը հաստատվել է 19.02.2021թ., իսկ հրապարակվել է 01.03.2021թ.:</p> <p>Ընթացակարգին մասնակցել էր մեկ մասնակից, որի արդյունքում պետք է հրավիրվեր բանակցությունների, որը չի կայացվել:</p> <p>Պայմանագիր կնքելու որոշումը կայացվել է 19.02.2021թ., իսկ հրապարակվել է 25.02.2021թ.:</p> <p>Պայմանագիրը ծանուցվել է 02.03.2022թ և կնքվել է 04.03.2021թ, իսկ կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 05.03.2021թ.:</p> <p>Կնքված պայմանագրի մեջ կատարվել փոփոխություններ 12.03.2021թ, իսկ հրապարակվել</p>	<p>կետի 2-րդ պարբերությունը, այն է՝ Գնումները համակարգողը եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակվել տեղեկագրում:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասը, այն է՝ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը պետք է հրապարակվեր տեղեկագրում հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը: Ինչպես նաև խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 40-րդ կետի 5-րդ ենթակետի բ), գ) և դ) պարբերությունները, այն է՝ Եթե գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա՝ բ) հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնահատող հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված բոլոր մասնակիցներին էլեկտրոնային ձևով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին, գ) բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը, դ) յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար</p>
--	--	---	--

		<p>է 28.06.2021թ.:</p>	<p>նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը, ինչը բացակայում է:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը, այն է՝ երբ մրցույթին մասնակցել է մեկ մասնակից, որի արդյունքում պետք է վարվեր բանակցություններ, ինչը բացակայում է:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ Մինչև պայմանագիր կնքելը պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է հայտարարություն պայմանագիր կնքելու որոշման մասին ոչ ուշ, քան ընտրված մասնակցի մասին որոշման ընդունմանը հաջորդող առաջին աշխատանքային օրը:</p> <p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 32-րդ կետի թ) պարբերությունը, այն է՝ եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, որը բացակայում է:</p> <p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 55-րդ կետը, այն է՝ պայմանագրում կատարված փոփոխությունը և դրա մասին հայտարարությունը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ այդ փոփոխությունը կատարելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում:</p>
<p>ՀՀՏԿԵՆԶԿ-Զ-ԳՀԱՇՁԲ-21/6</p>	<p>Առկա չէ</p>	<p>Ընթացակարգի հայտերի վերջնաժամկետ՝ 22.02.2021թ.,: Բացման և գնահատման նիստը</p>	<p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 8-րդ կետի 2-րդ պարբերությունը, այն է՝ Գնումները համակարգողը եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում</p>

		<p>կայացել է 22.02.2021թ., իսկ նիստի արձանագրությունը հրապարակվել է 01.03.2021թ.-ին:</p> <p>Շահերի բախման բացակայության մասին հայտարարության տեքստը հաստատվել է 22.02.2021թ., իսկ հրապարակվել է 01.03.2021թ.:</p> <p>Բանակցությունների նիստի վարման արձանագրությունը կայացել է 26.02.2021թ., իսկ հրապարակվել է 04.03.2021թ.:</p> <p>Պայմանագիր կնքելու որոշումը կայացվել է 26.02.2021թ., իսկ հրապարակվել է 01.03.2021թ.:</p> <p>Պայմանագիրը ծանուցվել է 11.03.2022թ և կնքվել է 12.03.2021թ, իսկ կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 07.05.2021թ.:</p> <p>Կնքված պայմանագրի մեջ կատարվել փոփոխություններ 15.03.2021թ, իսկ հրապարակվել է 30.06.2021թ.:</p>	<p>պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասը, այն է՝ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը պետք է հրապարակվեր տեղեկագրում հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասը, այն է՝ հայտերի գնահատման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջաջին աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում:</p> <p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 32-րդ կետի թ) պարբերությունը, այն է՝ եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, որը բացակայում է:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ Պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է</p>
--	--	---	--

			<p>կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը:</p> <p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 55-րդ կետը, այն է՝ պայմանագրում կատարված փոփոխությունը և դրա մասին հայտարարությունը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ այդ փոփոխությունը կատարելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում:</p>
<p>ՀՀՏԿԵՆԶԿ-Զ-ԳՀԱՊԶԲ-21/2</p>	<p>Առկա չէ</p>	<p>Ընթացակարգի հայտերի վերջնաժամկետ՝ 25.02.2021թ.:</p> <p>Բացման և գնահատման նիստը կայացել է 25.02.2021թ., իսկ նիստի արձանագրությունը հրապարակվել է 04.03.2021թ.-ին:</p> <p>Շահերի բախման բացակայության մասին հայտարարության տեքստը հաստատվել է 25.02.2021թ., իսկ հրապարակվել է 04.03.2021թ.:</p> <p>Անհամապատասխանությունների շտկման նիստի վարման արձանագրությունը կայացել է 01.03.2021թ., իսկ հրապարակվել է 17.03.2021թ.:</p> <p>Բանակցությունների նիստի վարման արձանագրությունը կայացել է 04.03.2021թ., իսկ</p>	<p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասը, այն է՝ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը պետք է հրապարակվեր տեղեկագրում հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասը, այն է՝ հայտերի գնահատման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջաջին աշխատանքային օրը հայտերի գնահատման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում:</p> <p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 32-րդ կետի թ) պարբերությունը, այն է՝ եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, որը բացակայում է:</p>

		<p>հրապարակվել է 17.03.2021թ.:</p> <p>Պայմանագիր կնքելու որոշումը կայացվել է 04.03.2021թ., իսկ հրապարակվել է 09.03.2021թ.:</p> <p>Պայմանագիրը ծանուցվել է 15.03.2022թ և կնքվել է 16, 18, 19.03.2021թ, իսկ կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 27.05.2021թ.:</p> <p>Կնքված պայմանագրի մեջ պետք է կատարվեր փոփոխությունները որը բացակայում է, ինչը պարտադիր էր, քանի որ ֆինանսական միջոց առկա չէր:</p>	<p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ Պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը:</p> <p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 55-րդ կետը, այն է՝ պայմանագրում կատարված փոփոխությունը և դրա մասին հայտարարությունը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ այդ փոփոխությունը կատարելու օրվանից հաշված երեք աշխատանքյին օրվա ընթացքում:</p>
<p>ՀՀՏԿԵՆԶԿ-Զ-ԳՀԱՇՁԲ-21/7</p>	<p>Առկա չէ</p>	<p>Ընթացակարգի հայտերի վերջնաժամկետ՝ 03.03.2021թ.:</p> <p>Բացման և գնահատման նիստը կայացել է 03.09.2021թ., իսկ նիստի արձանագրությունը հրապարակվել է 09.03.2021թ.-ին:</p> <p>Շահերի բախման բացակայության մասին հայտարարության տեքստը հաստատվել է 03.09.2021թ., իսկ հրապարակվել է 09.03.2021թ.:</p>	<p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 8-րդ կետի 2-րդ պարբերությունը, այն է՝ Գնումները համակարգողը եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող փաստաթղթերի համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակվել տեղեկագրում:</p>

		<p>Բանակցությունների նիստի վարման արձանագրությունը կայացել է 09.03.2021թ., իսկ հրապարակվել է 17.03.2021թ.:</p> <p>Պայմանագիր կնքելու որոշումը կայացվել է 09.03.2021թ., իսկ հրապարակվել է 09.03.2021թ.:</p> <p>Պայմանագիրը ծանուցվել է 16.03.2022թ և կնքվել է 25.03.2021թ, իսկ կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 17.05.2021թ:</p> <p>Կնքված պայմանագրի մեջ կատարվել փոփոխություններ 29.03.2021թ, իսկ հրապարակվել է 30.06.2021թ.:</p>	<p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասը, այն է՝ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը պետք է հրապարակվեր տեղեկագրում հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասը, այն է՝ հայտերի գնահատման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջաջին աշխատանքային օրը հայտերի գնահատման նիստի արձանագրությունը պետք է հրապարակվել տեղեկագրում:</p> <p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 32-րդ կետի թ) պարբերությունը, այն է՝ եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, որը բացակայում է:</p> <p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 55-րդ կետը, այն է՝ պայմանագրում կատարված փոփոխությունը և դրա մասին հայտարարությունը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ այդ փոփոխությունը կատարելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում:</p>
<p>ՀՀՏԿԵՆԶԿ-Զ-ԳՀԱՇԶԲ-21/9</p>	<p>Առկա չէ</p>	<p>Ընթացակարգի հայտերի վերջնաժամկետ՝ 03.03.2021թ.:</p> <p>Բացման և գնահատման նիստը կայացել է 09.03.2021թ., իսկ նիստի արձանագրությունը</p>	<p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 8-րդ կետի 2-րդ պարբերությունը, այն է՝ Գնումները համակարգողը եզրակացություն է տալիս գնումների շրջանակներում պատվիրատուի հաստատած փաստաթղթերի վերաբերյալ, ապահովում է գնման ընթացակարգի և դրան առնչվող</p>

		<p>հրապարակվել է 15.03.2021թ.-ին:</p> <p>Շահերի բախման բացակայության մասին հայտարարության տեքստը հաստատվել է 09.03.2021թ., իսկ հրապարակվել է 15.03.2021թ.:</p> <p>Բանակցությունների նիստի վարման արձանագրությունը կայացել է 09.03.2021թ., իսկ հրապարակվել է 15.03.2021թ.:</p> <p>Պայմանագիր կնքելու որոշումը կայացվել է 09.03.2021թ., իսկ հրապարակվել է 11.03.2021թ.:</p> <p>Պայմանագիրը ծանուցվել է 16.03.2022թ և կնքվել է 17.03.2021թ, իսկ կնքված պայմանագրի մասին հայտարարությունը հրապարակվել է 17.05.2021թ:</p> <p>Կնքված պայմանագրի մեջ կատարվել է փոփոխություններ 29.03.2021թ, իսկ հրապարակվել է 30.06.2021թ.:</p>	<p>փաստաթղթերի համապատասխանությունը Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պայմաններին:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 8-րդ մասը, այն է՝ հայտերի բացման նիստի օրվա ավարտին հաջորդող աշխատանքային օրը հայտերի բացման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 7-րդ մասը, այն է՝ շահերի բախման բացակայության մասին հայտարարությունը պետք է հրապարակվեր տեղեկագրում հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 9-րդ մասը, այն է՝ հայտերի գնահատման նիստի օրվա ավարտին հաջորդող առաջաջին աշխատանքային օրը հայտերի գնահատման նիստի արձանագրությունը պետք է հրապարակել տեղեկագրում:</p> <p>Խախտվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասը, այն է՝ Պատվիրատուն տեղեկագրում հրապարակում է կնքված պայմանագրի մասին հայտարարություն ոչ ուշ, քան պայմանագիրը կնքվելուն հաջորդող առաջին աշխատանքային օրը:</p> <p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 32-րդ կետի թ) պարբերությունը, այն է՝ եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա իրական շահառուների վերաբերյալ տեղեկատվությունը պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է տեղեկագրում, որը բացակայում է:</p>
--	--	---	---

			<p>Խախտվել է 04.05.2017 թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» ՀՀ կառավարության 526-ն որոշման 55-րդ կետը, այն է՝ պայմանագրում կատարված փոփոխությունը և դրամասին հայտարարությունը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ այդ փոփոխությունը կատարելու օրվանից հաշված երեք աշխատանքյին օրվա ընթացքում:</p>
